ՎԻՔԻՊԵԴԻԱ
Ազատ հանրագիտարան

# Արա Բ Կարդոս

Վիքիպեդիայից՝ ազատ հանրագիտարանից

| Արա Բ Կարդոս | |
|---|---|
| Ծնվել է | մ. թ. ա. 1743 |
| Մահացել է | մ. թ. ա. 1725 |

**Արա Բ Կարդոս** (մ.թ.ա. 1743-1725), հայոց 9-րդ թագավորը, Արա Գեղեցիկի որդին։

## Կենսագրություն

Արա Բ թագավորի մասին տեղեկությունները հիմնականում ցրված են Մովսես Խորենացու երկի մի քանի գլուխներում.

> « Արայի (Արա I Գեղեցիկի[1] մասին այսքանը բավական է կարճառոտ հիշատակել։ Նա տարիներ ապրելով ծնավ Կարդոսին (Արա II Կարդոսին[2], «Արայան Արա (Արա II Կարդոս[2] սա մեր Արայի (Արա I Գեղեցիկի[1] որդին է, որին Շամիրամը Արա կոչեց և մեր աշխարհի վերակացության գործը նրան հավատաց»[3], «Իսկ Շամիրամը դեռ իր կենդանության ժամանակ Արայի (Արա I Գեղեցիկի[1] որդուն, որ ծնած էր նրա սիրելի կնոջից՝ Նվարդից և տասներկու տարեկան երեխա էր մնացել Արայի մահվան ժամանակ, դեպի Արա Գեղեցիկը տածած սիրո պատճառով նրա անունով կոչում է Արա և նշանակում է մեր աշխարհի գլխավոր՝ սրտանց նրան վստահելով. և ասում են, թե նա պատերազմում Շամիրամի հետ մեռավ[4] »

«Հայ ժողովրդի ռազմական տարգրքում» նշվում է.

> « …Շամիրամի արկածախնդրության տապալումից, կրած կորուստներից և հատկապես իրենց սիրելի արքայի զոհվելուց հետո հայերը լցված էին վրեժխնդրությամբ։ Ընդ որում հասկանալի էր, որ իրական մեղավորը ոչ այնքան Ասորեստանն էր, թեև վերջինիս մեղքի բաժինն էլ էր հսկայական, այլ՝ Բաբելոնը։ Արդյունքում զոհված արքայի որդին՝ Հայոց թագավորության նոր արքա հռչակված Արա II Կարդոսը, մարտական գործողություններ սկսեց հենց Բաբելոնի դեմ[5]։ »

Այդ իրադարձությունը նշված գրքում անվանված է Հայ-բաբելոնյան II պատերազմ (մ.թ.ա. 1742-1711)։

Սկիզբ առան իրադարձություններ, որոնք համաշխարհային պատմական ավանդույթը ավանդաբար կապվում են սեմական տարբերակում «կաս(ս)ու» անվանվող էթնիկական խմբի հետ։ Ավանդաբար ընդունված է կիրառել անվան հենց այս տարբերակը, թեև առավել ճշգրիտ է կիրառել «Կարդու» անվանումը, ինչպես տվյալ էթնիկական խումբը ինքն է անվանել իրեն[6]։

## Ծանոթագրություններ


1. մ.թ.ա. 1769-1743
2. մ.թ.ա. 1743-1725
3. Մովսես Խորենացի, Գիրք 1, գլուխ 19
4. Մովսես Խորենացի, Գիրք 1, գլուխ 20
5. «Հայ ժողովրդի ռազմական Տարեգիրք, Գիրք 1», էջ 28
6. Մովսիսյան Ա. Ե., Հայոց , էջ 20


Դ·Ք·Խ (https://hy.wikipedia.org/w/index.php?title=%D4%BF%D5%A1%D5%B2%D5%A1%D5%BA%D5%A1%D6%80:%D5%80%D5%A1%D5%B5%D5%AF[illegible]%D6%82%D5%B6%D5%AB%D5%B6%D5%A5%D6%80&action=edit) Հայկազունիներ (մ.թ.ա. 2107–331) [Բացել]

Հայոց պատմություն

Ստացված է «https://hy.wikipedia.org/w/index.php?title=Արա_Բ_Կարդոս&oldid=7743265» էջից